



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ _____

Երևանք.

_____թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Համալսարան), ի դեմս ռեկտոր Միքայել Նարիմանյանի, մի կողմից և Համալսարանի _____ ֆակուլտետի ուսանող _____

(անուն, ազգանուն)

_____ (այսուհետ՝ Ուսանող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1) Սույն պայմանագրի առարկան Համալսարանի կողմից Ուսանողի ուսումնառության տարիներին բարձրագույն բժշկական անընդհատ կրթական ծրագրով նախատեսված ուսումնական գործընթացի կազմակերպումն է.

2) Սույն պայմանագրի իրավական հիմքը «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներն են և այլ իրավական ակտեր.

3) Սույն պայմանագիրը Համալսարանի Ուսանողի հետ կնքվում է բարձրագույն բժշկական անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով նախատեսված _____ տարի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎՈՒՄՆԵՐ ՈՒՆԻ

1) Իր ինքնավարության և իրավասությունների շրջանակներում կազմակերպելու ուսումնական գործընթացը.

2) Սահմանելու և իրականացնելու Ուսանողի ատեստավորման ձևերը և կարգը՝ ելնելով յուրաքանչյուր ուսումնական տարվա ծրագրերից.

3) ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պարտականությունները չկատարելու կամ խախտելու դեպքում Ուսանողի նկատմամբ կիրառելու կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ ընդհուպ Համալսարանից հեռացնելը.

4) Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում ուսման վճարը չմուծելու դեպքում Ուսանողին հեռացնելու Համալսարանից:

3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել բարձրագույն բժշկական անընդհատ կրթական ծրագրի գործընթացը.

2) Ուսումնառության տարիներին ստեղծել ուսումնական ծրագրով նախատեսված ուսումնական գործընթացն ապահովող բոլոր հնարավոր պայմանները.

3) Ուսումնառությունն ավարտելու և ամփոփիչ ատեստավորումն անցնելու դեպքում ուսանողին շնորհել բժշկի որակավորմամբ դիպլոմ.

4. ՈՒՍԱՆՈՂԸ ԻՐԱՎՈՒՄՆԵՐ ՈՒՆԻ

1) Մասնակցելու կրթական, հետազոտական ծրագրերին, գիտաժողովներին, սեմինարներին և այլ միջոցառումներին.

2) Անվճար օգտվելու Համալսարանի գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական և գիտական կառույցների ծառայություններից.

3) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցելու Համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին.

4) Ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար սահմանված կարգով ստանալու բարոյական և (կամ) նյութական խրախուսանք:

5. ՈՒՍԱՆՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է

1) Սահմանված կարգով և ժամկետում կատարել ուսումնական ծրագրերով նախատեսված բոլոր առաջադրանքները, մասնակցել սահմանված քննական գործընթացներին, հաճախել դասերին.

2) Ծանոթանալ Համալսարանի ներքին կարգապահական կանոններին, ուսանողական իրավունքներին և պարտականություններին, ուսումնական գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերին (Համալսարանի ներքին կարգապահական կանոններին և Ուսանողի իրավունքներին ու պարտականություններին ծանոթացումն Ուսանողի կողմից կատարվում է մինչև պայմանագրի կնքումը և հավաստվում է սույն պայմանագիրը ստորագրելով):

3) Կատարել ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պարտականությունները.

4) Սահմանված կարգով և ժամկետներում մուծել ուսման վճարը:

6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1) Կրթական հիմնական ծրագրի մեկ ուսումնական տարվա համար ուսման վճարի չափը սահմանվում է _____ դրամ և այն ենթակա չէ փոփոխման կրթության բոլոր տարիներին: Ուսման վճարը Համալսարանին վճարվում է փոխանցմամբ կամ կանխիկ: Ուսման վճարի վճարման ժամկետ է սահմանվում տվյալ ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար մինչև սեպտեմբերի 15-ը, երկրորդ կիսամյակի համար մինչև փետրվարի 15-ը: Այդ ժամկետում չվճարելու դեպքում ուսանողը կարող է ուսումնական գործընթացին մասնակցելուց զրկվել և հաջորդող 15-օրյա ժամկետում չմուծելու դեպքում կարող է հեռացվել Համալսարանից: Ուսանողի առաջին ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսման վճարի վճարման ժամկետ է սահմանվում մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 1-ը:

Ուսանողի ուսման վճարը փոխհատուցվում է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով՝ առաջադիմության հիմքով, մրցութային կարգով՝ մեկ ուստարվա քննությունների և ստուգաքննների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունենալու դեպքում: Առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով: Պետության կողմից տրվող ուսման վճարի լրիվ փոխհատուցման նպաստների քանակը սահմանվում է ՀՀ Կառավարության կողմից, որը տեղափոխվում է կուրսից կուրս: Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պետությունը և Համալսարանը ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում են տրամադրում նաև ուսանողի որոշակի սոցիալական և կանոնակարգով սահմանված այլ կարգավիճակի առկայության դեպքերում:

Պետական կրթաթոշակի տրման կարգը և չափը սահմանում է ՀՀ Կառավարությունը:

2) Ուսանողի նախաձեռնությամբ, մինչև ուսումնական տարվա մեկնարկը, սույն պայմանագիրը լուծելու դեպքում ուսման վճարը վերադարձվում է, եթե նախապես վճարվել է, իսկ ուսումնական տարվա առաջին կամ երկրորդ կիսամյակների մեկնարկից հետո մեկ ամսվա ընթացքում Համալսարանի հետ սույն պայմանագիրը լուծելու դեպքում ուսանողը Համալսարանին վճարում է տարեկան ուսման վճարի մեկ ամսվա գումարը, իսկ եթե ուսման վճարը վճարվել է՝ Համալսարանի կողմից վերադարձվում է ուսման վճարը՝ պահելով տվյալ կիսամյակի ուսման վճարից մեկ ամսվա գումար: Ուսումնական տարվա առաջին կամ երկրորդ կիսամյակների մեկնարկից մեկ ամիս հետո պայմանագիրը ուսանողի նախաձեռնությամբ լուծելու դեպքում ուսման վճարը չի վերադարձվում:

Ուսանողի հեռացվելու դեպքում տվյալ կիսամյակի ուսման վճարը չի վերադարձվում: Առաջին կիսամյակում հեռացվելու դեպքերում երկրորդ կիսամյակի ուսման վճարը վերադարձվում է հրամանով ազատվելուց հետո հաջորդող ամսվա 1-ից:

Որպես բացառություն՝ ուսման վճարը կարող է վերադարձվել, երբ ուսանողն առողջական պատճառներով ի վիճակի չէ ուսումը շարունակելու և ներկայացնում է բժշկական փաստաթուղթ: Այդ դեպքում վերադարձման ենթակա գումարը պետք է համապատասխանի ուսուցում չանցած ժամանակին, որը սկսում է հաշվարկվել Ուսանողի հրամանով ազատվելու օրվանից:

3) Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել կողմերի համաձայնությամբ: Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերի համաձայնությամբ կամ միակողմանի՝ սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները կողմերից մեկի չկատարելու, կամ Համալսարանից Ուսանողին հեռացնելու դեպքերում, կամ Ուսանողի նախաձեռնությամբ:

4) Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից և ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

Կ Ո Ղ Մ Ե Ր Ի Հ Ա Ս Ց Ե Ն Ե Ր Ը Ե Վ Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ը

**Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան**

Ուսանող

(անուն, հայրանուն, ազգանուն, ստորագրություն)

Ռեկտոր Մ. Զ. Նարիմանյան

(անձնագրի No, էրբ և ում կողմից է տրված)

(ստորագրություն և կնիք)

(հասցե)

ՀՀ, Երևան 0025, Կորյունի 2

Եթե պայմանագիր կնքելու պահին չի լրացել ուսանողի 18 տարին՝ անհրաժեշտ է նաև ուսանողի ծնողի կամ խնամակալի կամ հոգաբարձուի համաձայնությունը՝ ստորագրությամբ

(անուն, հայրանուն, ազգանուն, ստորագրություն)